«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝
Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը 5
2 Պատրաստման հիմքը 6
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ 10
4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 16
5 Կարճաժամկետ բանկային ավանդներ 17
6 Միջնորդների մոտ պահվող գումարներ 17
7 Ածանցյալ ֆինանսական գործիքներ 17
8 Ներդրումներ ամորտիզացված արժեքով 17
9 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 19
10 Այլ ակտիվներ 19
11 Հետաձգված շահութահարկ 19
12 Հաճախորդներից ստացված կանխավճարներ 20
13 Հաշվեգրված պարտավորություններ 21
14 Սեփական կապիտալ և պահուստներ 21
15 Հասույթ բրոքերային և այլ ծառայություններից 21
16 Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով 21
17 Միջնորդավճարների գծով ծախսեր 21
18 Այլ ծախսեր 22
19 Շահութահարկի գծով փոխհատուցում 22
20 Հաշվապահական հաշվառման վերաբերյալ գնահատումներ և դատողություններ 22
21 Ֆինանսական գործիքներ 23
22 Ֆինանսական ռիսկերի կառավարում 24
23 Իրական արժեքի չափում 28
24 Կապիտալի ռիսկի կառավարում 28
25 Պայմանական դեպքեր 29
26 Կապակցված կողմեր 29
27 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում 30

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Ընկերության նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների:

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են էական հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվություն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (+37410) 512151, ֆաքս՝ (+37410) 521000, www.pwc.com/am

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների միջազգային վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերութայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում,

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (+37410) 512151, ֆաքս՝ (+37410) 521000, www.pwc.com/am

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Լևան Կանկավա

Պատասխանատու աուդիտոր

Նինո Կադագիշվիլի

Տնօրեն

10 մայիսի 2024թ

Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (+37410) 512151, ֆաքս՝ (+37410) 521000, www.pwc.com/am

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ. (վերաներկայացված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	290,471	64,818
Կարճաժամկետ բանկային ավանդներ	5	136,805	226,533
Միջնորդների մոտ պահվող գումարներ	6	56,390	55,683
Ածանցյալ ակտիվներ	7	141	113
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	8	245,319	435,021
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	9	37,840	61,333
Այլ ակտիվներ	10	128,831	80,454
Շահութահարկի կանխավճար		18,180	11,784
Հետաձգված հարկային ակտիվներ	11	20,625	10,385
Ընդամենը ակտիվներ		**934,602**	**946,124**
Պարտավորություններ			
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	12	120,618	82,058
Ածանցյալ պարտավորություններ	7	187	200
Վարձակալության գծով պարտավորություններ	9	914	22,169
Հաշվեգրված պարտավորություններ	13	129,912	77,376
Ընդամենը պարտավորություններ		**251,631**	**181,803**
Սեփական կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	14	348,683	348,683
Պահուստային կապիտալ		42,718	40,418
Չբաշխված շահույթ		291,570	375,220
Ընդամենը սեփական կապիտալ		**682,971**	**764,321**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**934,602**	**946,124**

Հաստատված է թողարկման համար և ստորագրվել է Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. մայիսի 10-ին.

Արտակ Նահապետյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Գայանե Հովհաննիսյան
Ֆինանսական վարչության ղեկավար

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2023թ.**	**2022թ. (վերաներկայացված)**
Հասույթ բրոքերային և այլ ծառայություններից	15	439,761	230,310
Միջնորդավճարների գծով ծախսեր	17	(5,315)	(4,409)
Զուտ հասույթ		**434,446**	**225,901**
Հատուցումներ աշխատակիցներին		(384,942)	(207,421)
Մաշվածություն և ամորտիզացիա	9	(45,007)	(30,018)
Այլ ծախսեր	18	(149,260)	(118,199)
Տարվա գործառնական վնաս		**(144,763)**	**(129,737)**
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	16	51,192	46,647
Ֆինանսական ծախսեր		(1,431)	(1,397)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)		3,412	(115,832)
Վնաս մինչև շահութահարկով հարկումը		**(91,590)**	**(200,319)**
Շահութահարկի գծով փոխհատուցում	19	10,240	22,827
ՏԱՐՎԱ ՎՆԱՍ		**(81,350)**	**(177,492)**
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎՆԱՍ		**(81,350)**	**(177,492)**

Հազ. ՀՀ դրամ	**Բաժնետի- րական կապիտալ**	**Պահուս- տային կապիտալ**	**Չբաշխված շահույթ**	**Ընդամենը**
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**348,683**	**38,031**	**555,099**	**941,813**
Տարվա վնաս (վերաներկայացված)	**-**	**-**	**(177,492)**	**(177,492)**
Ընդամենը տարվա համապարփակ վնաս	**-**	**-**	**(177,492)**	**(177,492)**
Չբաշխված շահույթի փոխանցում պահուստային կապիտալին	-	2,387	(2,387)	-
31 դեկտեմբերի 2022թ. (վերաներկայացված)	**348,683**	**40,418**	**375,220**	**764,321**
Տարվա վնաս	**-**	**-**	**(81,350)**	**(81,350)**
Ընդամենը տարվա համապարփակ վնաս	**-**	**-**	**(81,350)**	**(81,350)**
Չբաշխված շահույթի փոխանցում պահուստային կապիտալին	-	2,300	(2,300)	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**348,683**	**42,718**	**291,570**	**682,971**

Հազ. ՀՀ դրամ	**Ծան.**	**2023թ.**	**2022թ. (վերաներկա-յացված)**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված միջոցներ		64,242	1,912,811
Հաճախորդներին փոխանցված միջոցներ		(62,097)	(486,402)
SS և խորհրդատվական ծառայություններից ստացված միջոցներ		383,885	161,311
Միջնորդներին փոխանցված դրամական միջոցներ		(7,965)	(1,665,202)
Միջնորդներից ստացված դրամական միջոցներ		57,470	13,206
Աշխատավարձ և այլ համարժեք վճարումներ աշխատակիցներին		(376,813)	(257,308)
Բանկային ավանդների փոփոխություն		87,071	137,059
Հարթակի սպասարկման վճարներ		-	(36,982)
Ապահովագրություն		(38,910)	(14,231)
Անձնակազմի հավաքագրում		(4,757)	-
Վճարված հարկեր և տուրքեր		(31,670)	(21,139)
Այլ ծախսեր		(47,960)	(47,738)
		22,496	**(304,615)**
Վճարված շահութահարկ		(6,396)	(10,231)
Գործառնական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**16,100**	**(314,846)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ստացված տոկոսային եկամուտ		38,010	48,541
Վարկի մարում	8	202,905	-
Արժեթղթերում ներդրումներից եկամուտներ		112,112	20,000
Ներդրումների ձեռքբերում		(104,790)	(140,435)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(10,175)	(8,484)
ներդրումային գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		**238,062**	**(80,378)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վարձակալության գծով պարտավորություններ	9	(32,834)	(24,330)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցներ		**(32,834)**	**(24,330)**
Դրամական միջոցների և դրամական միջոցների համարժեքների զուտ աճ / (նվազում)		**221,328**	**(419,554)**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		4,325	(76,960)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**4**	**64,818**	**561,332**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**4**	**290,471**	**64,818**

1 «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ն և նրա գործունեությունը

«Էքուիթի Էյ Էմ» փակ բաժնետիրական ընկերությունը («Ընկերություն») հիմնադրվել է 2012թ. հուլիսի 10-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ թիվ 11 գրանցման համարով: Ընկերությունը գործունեություն է ծավալում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից 2012թ. հուլիսի 10-ին տրված «Ներդրումային ծառայությունների մատուցման մասին» թիվ 0011 լիցենզիայի հիման վրա: Ընկերության գործառնական ընթացակարգերը համապատասխանեցված են ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերով սահմանված պահանջներին:

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են.

- Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը,
- Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը,
- Ոչ հիմնական ծառայությունների գծով խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

2018թ. Ընկերությունը նաև ձեռք է բերել «իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման» լիցենզիա: Սակայն 2022թ. և 2023թ. ընթացքում այս լիցենզիայի համաձայն գործարքներ չեն իրականացվել:

Ընկերությունը մասնագիտացած է արտարժույթի և ածանցյալ գործիքների առցանց առևտրում՝ համապատասխան ծառայություններ առաջարկելով պրոֆեսիոնալ և ինստիտուցիոնալ հաճախորդներին: Ընկերությունն իր հաճախորդներին առաջարկում է աշխարհի ամենահայտնի առևտրային հարթակներից մեկը՝ MetaTrader 4 (MT4): MT4-ը թրեյդերներին առաջարկում է առևտրային ամբողջական փաթեթ՝ մեկ հարթակից առևտրային բազմաթիվ շուկաներ մուտք գործելու հնարավորությամբ, որոնցից յուրաքանչյուրը թույլ է տալիս իրական ժամանակով հետևելու գնանշումների ցանկերին, նորություններին, իրադարձություններին և օգտվելու վերլուծական գործիքակազմից:

Ընկերությունը վերահսկվում է «Էքութի Գրուփ ԼԹԴ» ընկերության կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը: «Էքութի Գրուփ ԼԹԴ» -ն ընկերության միակ բաժնետերն է: «Էքութի Գրուփ ԼԹԴ» ընկերությունը գրանցված է Ջերսիի Սենթ Հելիեր քաղաքում և վերահսկվում է հիմնական բաժնետեր Աբդուլ Ռաուֆ Ալ Բիթարի կողմից, որին պատկանում է բաժնետոմսերի 59%-ը: Ընկերության պետական գրանցման համարն է՝ 7216039:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. եղել է 22-ը (2022թ.՝ 16-ը):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փող. 26/1, սենյակ 609:

Գործարար միջավայր

Հայաստան: Հայաստանում քաղաքական և տնտեսական միջավայրի փոփոխությունները և իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը կրում են շարունակական բնույթ: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը վերահաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև. 2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող

պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա:

Ուկրաինայի հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրել է հայկական շուկա արտարժույթի ներհոսքերի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալիորեն արժևորվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:

Ներկայիս տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքից:

Կլիմայի փոփոխություն. Հաշվի առնելով Ընկերության գործունեության բնույթը, գործառնական միջավայրը, Ընկերության կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության ներկայացում չի պահանջվում տարեկան հաշվետվության կամ համանման հաշվետվության միջոցով: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը պահպանել է Կառավարության կողմից սահմանված բնապահպանական պահանջները և վստահ է, որ Ընկերությունը չունի ընթացիկ էական բնապահպանական պարտավորություններ: Այնուամենայնիվ, Հայաստանում բնապահպանական օրենսդրությունը մշակման փուլում է, և ապագայում օրենսդրության հնարավոր փոփոխություններն ու մեկնաբանությունները կարող են առաջացնել զգալի պարտավորություններ:

2 Պատրաստման հիմքը

Համապատասխանության մասին հայտարարություն . Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ ստանդարտներ) համաձայն: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքով:

Չափման հիմքը. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ: Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել գործածելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների կողմից: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացվել է առավել մոտ հազարական մեծությամբ:

Գնահատումների և դատողությունների կիրառում: ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարության կողմից կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում:

Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ստորև թվարկված վերանայված ստանդարտների կիրառումը Ընկերության համար պարտադիր է՝ սկսած 2023թ. հունվարի 1-ից, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության վրա.

ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը: Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ:

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով:

ՖՀՄՍ 17-ը կիրառող ապահովագրողների համար անցումային պահանջների կիրառման ընտրության հնարավորություն. Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում (թողարկվել է 2021թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 17-ի անցումային պահանջների փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է տալիս բարելավելու ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման վերաբերյալ տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական

հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

***Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ* – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում Շահութահարկ. Միջազգային հարկային բարեփոխում – Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոններ (հրապարակված է 2023թ. մայիսի 23-ին): 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ի նեղ շրջանակի փոփոխությունները: Այս փոփոխությունները կատարվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից միջազգային հարկային բարեփոխումների արդյունքում հրապարակված Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների առաջիկայում սպասվող ներդրմանը նախապատրաստվելու համար: Փոփոխությունները ժամանակավոր բացառություն են սահմանում Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների կիրառումն ապահովելու համար ընդունված կամ ըստ էության ընդունված հարկային օրենքներից բխող հետաձգված հարկերի ճանաչման և բացահայտման պահանջի գծով: Համաձայն ՀՀՄՍԽ-ի կողմից սահմանված՝ ուժի մեջ մտնելու ամսաթվի, ընկերությունները կարող են բացառությունը կիրառել անմիջապես, սակայն բացահայտման պահանջները կկիրառվեն 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը

պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա : Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (Թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա: Բացահայտման նոր պահանջները կգործեն 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին): 2023թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիություն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը չափման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ: Բացահայտման նոր պահանջները կգործեն 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ընկերությունը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթներ

Արտարժույթ. Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս գործառնական արժույթից տարբեր արժույթներով գործարքները հաշվառվում են գործարքների ամսաթվերի համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքներով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար՝ 404.79 ՀՀ դրամ, 1 եվրո՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 1 ԱՄՆ դոլար՝ 393,57 ՀՀ դրամ և 1 եվրո՝ 420,06 ՀՀ դրամ): Ոչ դրամական հոդվածները չեն փոխարկվում և չափվում են սկզբնական արժեքով (փոխարկված գործարքի ամսաթվի փոխարժեքներով), բացառությամբ արտարժույթով արտահայտված՝ իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների, որոնք փոխարկվում են իրական արժեքը որոշելու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով:

Դրամական հոդվածների հաշվարկի և փոխարկման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցների հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային սարքավորումներ	- 1-3 տարի
Արտադրատնտեսական գույք	- 8 տարի

Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ծախսումներն ամորտիզացվում են վարձակալության պայմանագրի ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվներ Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի համար:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում . Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Ամորտիզացիայի ենթակա ակտիվները դիտարկվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը իրենից ներկայացնում է զուտ վաճառքի գնի և օգտագործման արժեքի առավել բարձր մեծությունը: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը որպես վարձակալ: Ընկերությունը պայմանագրի գործողության սկզբում գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ. Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերաչափում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել գործնական նպատակահարմարության մոտեցումը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ֆինանսական գործիքներ՝ Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվներ՝ Դասակարգում և սկզբնական չափում

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները (եթե կիրառելի է), բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Դասակարգումը որոշվում է հետևյալ երկու գործոնների հիման վրա.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրամական հոսքերի բնութագրերը:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում: Ընկերության ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ

Սկզբնական ճանաչումից հետո դրանք չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկային ավանդները, պարտատոմսերը, տրված փոխառությունները և առևտրային դեբիտորական պարտքերը պատկանում են ֆինանսական գործիքների այս կատեգորիային:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ

ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայի ակտիվները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով օգուտը կամ վնասը՝ շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Այս կատեգորիայի ակտիվները ներառում են գների տարբերության պայմանագրերը և դասակարգվում են որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ: Դրանք այն ածանցյալ գործիքներն են որոնք՝

- ձեռք են բերվել կամ առաջացել մոտակա ժամկետում վաճառքի կամ վերավաճառքի նպատակով.
- Հանդիսանում են ֆինանսական գործիքների բացահայտված պորտֆելի մի մասը, որը Ընկերությունը միասին է տնօրինում և ունի կարճաժամկետ շահույթի ստացման վերջին փաստացի օրինակը, և
- Չեն նախատեսված և չեն օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է հեռանկարային տեղեկատվություն՝ «ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակում ընդգրկված գործիքները ներառում են ամորտիզացված արժեքով չափվող փոխառություններ և պարտքային բնույթի այլ ֆինանսական ակտիվները, առևտրային դեբիտորական պարտքերը, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված և չափված պայմանագրային ակտիվները:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, Ընկերությունը հաշվի է առնում տեղեկատվության ավելի լայն շրջանակ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, ողջամիտ և հիմնավոր կանխատեսումները, որոնք ազդում են գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Այս հեռանկարային մոտեցումը կիրառելիս կատարվում է տարբերակում հետևյալ գործիքների միջև.

- ֆինանսական գործիքներ, որոնց վարկային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ որոնք ունեն ցածր վարկային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց վարկային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են կամ որոնք չունեն ցածր վարկային ռիսկ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և չափում. Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են հաճախորդներին վերադարձման ենթակա գումարները, առևտրային կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ. Ամորտիզացված արժեքով ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում են գործարքի ծախսումների գծով, եթե Ընկերությունը չի դասակարգել ֆինանսական պարտավորությունը որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ածանցյալ գործիքների և ֆինանսական պարտավորությունների, որոնք հետագայում հաշվառվում են իրական արժեքով, իսկ համապատասխան օգուտները և

վնասները՝ ճանաչվում են շահույթում կամ վնասում (բացառությամբ ածանցյալ ֆինանսական գրոծիքների, որոնք նախատեսված և գործում են որպես հեջավորման գործիքներ):

Շահույթում կամ վնասում ներկայացված բոլոր տոկոսային ծախսերը ներառված են ֆինանսական ծախսերի կամ ֆինանսական եկամուտների կազմում:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են պայմանագրերից ստացված շահույթը կամ վնասը՝ դասակարգված որպես ածանցյալ գործիքներ:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ, եթե դրանք չեն սահմանվել որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում, ըստ ՖՀՄՍ 9-ի:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Դրամարկղում և բանկերում մնացորդները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներ են, որոնք հեշտությամբ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Ընկերության դրամական միջոցների և դրանց համարժեքները ներկայացված են Ծանոթագրություն 4-ում:

Սեփական կապիտալ. Ընկերության կողմից թողարկված բաժնային գործիքները հաշվառվում են դրանց դիմաց ստացված գումարների չափով: Բաժնետիրական կապիտալը ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը: Չբաշխված շահույթը ներառում է բոլոր ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթները: Սեփականատերերի հետ բոլոր գործարքները գրանցվում են առանձին՝ սեփական կապիտալում: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որում դրանք հայտարարվել են:

Պահուստներ: Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես անցյալ իրադարձության հետևանք, և հավանական է, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Շահութահարկ Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ ճանաչվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական

շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներն այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները:

ա) աշխատավարձեր և պարգևավճարներ,

բ) վճարովի տարեկան արձակուրդներ և վճարովի հիվանդության արձակուրդներ.

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո:

բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ. Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում

Պարգևավճարներ. Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

Հասույթ

Պայմանագրերից հասույթ. Հասույթի ճանաչման համար Ընկերությունն օգտագործում է Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ (ՖՀՄՍ ստանդարտ 15):

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրային զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց հաճախորդներից ստացված կանխավճարները և արտացոլում է այդ

գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը հիմնականում առաջանում է.

- միջնորդավճարներից և այլ վճարներից,
- Խորհրդատվական և SS ծառայություններից.

Միջնորդավճարները հաճախորդներից գանձվում են դիրքը բացելու պահին՝ հիմնվելով գործարքների ծավալի վրա՝ մեկ միլիոնի հաշվով, հավելագնից, կամ լոտի սիմվոլի (տարբերանշանի) չափի վրա, կամ որպես տոկոս, ըստ լոտի սիմվոլի (տարբերանշանի) չափի, այն արժույթով, որով բացված է հաճախորդի հաշիվը:

Սվոպները ներկայացնում են վճարված կամ վաստակած տոկոսները՝ կախված դիրքի չափից և տոկոսների վերաբերյալ գրանցումները ճիշտ ժամանակաշրջանում արտացոլելուց: Այս սվոպների տոկոսադրույքները հաշվարկվում են ամեն օր՝ հաշվի առնելով սիմվոլի (տարբերանշանի) օրական գինը, դիրքի չափը և հաճախորդի կողմից պահվելու օրերի քանակը: Սվոպի տոկոսադրույքները հաշվարկվում են ամեն օր՝ կախված հաճախորդի կողմից պահվող դիրքի չափից և տոկոսադրույքի տարբերությունից:

Խորհրդատվական և SS ծառայություններից հասույթ. Ընկերությունն ակտիվորեն զբաղվում է իր կապակցված կողմին SS ծառայությունների մատուցմամբ՝ ծրագրային ապահովման և տվյալագիտական մշակման, փորձարկման, սպասարկման միջոցով:

Հիմնական SS ծառայությունները ներառում են SS աջակցություն, բարելավող գործիքների մշակում և հարակից ծառայություններ: SS ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ կապակցված կողմին SS ծառայությունների մատուցման գինը հաշվարկվում է սկզբնական արժեքով՝ գումարած հավելագին:

Տոկոսային եկամուտ. Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Բանկում պահվող դրամական միջոցներ՝ Ընկերության միջոցներ	234,568	49,295
Բանկում պահվող դրամական միջոցներ՝ Հաճախորդի կանխավճարներ	55,903	15,523
	290,471	**64,818**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չափել է ԱՊԿ-ը և ճանաչվելուց հետո վարկային ռիսկի որևէ էական աճ չի եղել: ԱՊԿ-ը համարվում է ոչ էական, այդ պատճառով չի ազդում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա:

Հաճախորդներից ստացված կանխավճարները ճանաչվում են ծանոթագրություն 12-ում:

5 Կարճաժամկետ բանկային ավանդներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազ. ՀՀ դրամ

Բանկ	Արժույթ	Վարկանիշ (Moody's)	Տուցանիշ	Մնացորդ
«Կոնվերս Բանկ»	ՀՀ դրամ	Ba3	10.0%	51,918
«Ինեկոբանկ»	ՀՀ դրամ	Ba2	9.8%	53,069
«Ամերիաբանկ»	ՀՀ դրամ	Ba2	9.45%	31,818
				136,805

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազ. ՀՀ դրամ

Բանկ	Արժույթ	Վարկանիշ (Moody's)	Տուցանիշ	Մնացորդ
«Արարատբանկ»	ԱՄՆ դոլար	Ba3*	4.3%	88,662
«Կոնվերս Բանկ»	ՀՀ դրամ	B1	9.3%	52,984
«Ինեկոբանկ»	ՀՀ դրամ	Ba3	7.5%	53,061
«Ամիո բանկ»	ՀՀ դրամ	Ba3*	9.45%	31,826
				226,533

** Հայաստանի Հանրապետության Moody's-ի վարկանիշի օգտագործումը պայմանավորված է նրանով, որ բանկը չի գնահատվում Moody's-ի, Fitch-ի և S&P-ի կողմից: Բանկը կարգավորվում է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից:*

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չափել է ԱՊԿ-ը և ճանաչվելուց հետո վարկային ռիսկի որևէ էական աճ չի եղել: ԱՊԿ-ը համարվում է ոչ էական, այդ պատճառով չի ազդում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված կարճաժամկետ բանկային ավանդների մնացորդների վրա:

6 Միջնորդների մոտ պահվող գումարներ

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Միջնորդների մոտ պահվող գումարներ	56,390	55,683
Ընդամենը	**56,390**	**55,683**

Միջնորդների մոտ պահվող գումարները ներկայացնում են «Bloom Capital LP» -ին (կապակցված կողմ) փոխանցված գումարները, որը բրոքերային ծառայություններ է մատուցում Ընկերությանը: Ընկերությունը «Bloom Capital LP» -ին սահմանել է որպես իրացվելի միջոցների մատակարար՝ արտարժույթի սփոթ պայմանագրերով, մետաղական սփոթ պայմանագրերով և գնի տարբերությամբ պայմանագրերով հաճախորդների առևտրային գործարքների ապահովման նպատակով:

7 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են տարեվերջում դրական և բացասական դիրքով գների տարբերության պայմանագրերի (CFDs) վերջնական մնացորդների գծով օգուտներն ու վնասները:

8 Ներդրումներ ամորտիզացված արժեքով

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Փոխառություններ կապակցված կողմերին	-	198,820
Ներդրումներ արժեթղթերում	245,319	241,206
Կորստի գծով պահուստ	-	(5,005)
Ընդամենը	**245,319**	**435,021**

Ամորտիզացված արժեքով ներդրումները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ առանց ԱՊԿ պահուստի:

2018թ. Ընկերությունը փոխառություն է տրամադրել ԱՄԷ-ում գրանցված «Ի Ջի Էմ Մարքեթինգ Մենեջմենթ» ՍՊԸ-ին (կապակցված կողմ): Տրամադրված փոխառությունը 500,000 ԱՄՆ դոլար է և կրում է տարեկան 5% տոկոսադրույք, որը ենթակա է վճարման ամեն տարի: Փոխառության մարումը ամեն տարի երկարացվել է ևս մեկ տարով:

Մայր գումարը և տոկոսները ամբողջությամբ մարվել են 2023թ. Արժեթղթերում ներդրումների մանրամասները ներկայացված են ստորև.

	Վարկանիշ (Moody's)	Քանակ	Անվանական արժեք	Արժույթ	Արժե-կտրոնի տոկոսադրույք	Մարման ժամկետ	31 դեկտեմբերի 2023թ.
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Ba2	720	100,000	ՀՀ դրամ	9.75%	Փետր 2024թ.	72,796
«Ֆինքա» ՈՒՎԿ	Ba3*	2,000	10,000	ՀՀ դրամ	13.00%	Նոյ 2024թ.	20,316
«Ֆինքա» ՈՒՎԿ	Ba3*	2,000	25	ԱՄՆ դոլար	6.50%	Հուն. 2024թ.	20,208
«Ֆինքա» ՈՒՎԿ	Ba3*	500	100	ԱՄՆ դոլար	7.50%	Մայ. 2025թ.	20,301
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ	Ba3*	500	100	ԱՄՆ դոլար	6.25%	Հուլ 2024թ.	20,444
							154,065

	Վարկանիշ (Moody's)	Քանակ	Անվանական արժեք	Արժույթ	Արժե-կտրոնի տոկոսադրույք	Մարման ժամկետ	31 դեկտեմբերի 2022թ.
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Ba2	700	100	ԱՄՆ դոլար	4.75%	Մայ. 2023թ.	27,752
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Ba2	720	100,000	ՀՀ դրամ	9.75%	Փետր 2024թ.	72,813
«Ֆինքա» ՈՒՎԿ	Ba3*	2,000	10,000	ՀՀ դրամ	13.00%	Նոյ 2024թ.	20,317
«Ֆինքա» ՈՒՎԿ	Ba3*	2,000	25	ԱՄՆ դոլար	6.50%	Հուն. 2024թ.	19,715
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ	Ba3	500	100	ԱՄՆ դոլար	6.25%	Հուլ 2024թ.	19,944
							160,541

	Վարկանիշ (Moody's)	Անվանական գին	Պայմանագրային գին	Արժույթ	Եկամտաբերություն	Մարման ժամկետ	31 դեկտեմբերի 2023թ.
Պետական պարտատոմս	Ba3	38,000	34,347	ՀՀ դրամ	11.46%	Ապր. 2024թ.	36,919
Պետական պարտատոմս	Ba3	57,000	51,128	ՀՀ դրամ	11.39%	Հուն. 2024թ.	54,335
							91,254

	Վարկանիշ (Moody's)	Անվանական գին	Պայմանագրային գին	Արժույթ	Եկամտաբերություն	Մարման ժամկետ	31 դեկտեմբերի 2022թ.
Պետական պարտատոմս	Ba3	35,000	33,055	ՀՀ դրամ	11.27%	Մայ. 2023թ.	33,723
Պետական պարտատոմս	Ba3	50,000	45,962	ՀՀ դրամ	11.06%	Հուլ 2023թ.	46,942
							80,665

** Հայաստանի Հանրապետության Moody's-ի վարկանիշի օգտագործումը պայմանավորված է նրանով, որ ֆինանսական կազմակերպությունը չի գնահատվում Moody's-ի, Fitch-ի և S&P-ի կողմից: Ֆինանսական կազմակերպությունը կարգավորվում է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից:*

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը չափել է արժեթղթերում ներդրումների ԱՊԿ-ը և ճանաչվելուց հետո վարկային ռիսկի որևէ էական աճ չի եղել: ԱՊԿ-ը համարվում է ոչ էական, այդ պատճառով չի ազդում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված արժեթղթերում

ներդրումների վրա: Ընկերությունը կառավարում իր ներդրումների գծով պարտքային ռիսկը՝ գործարքներ իրականացնելով միայն կառավարության և ֆինանսական հաստատությունների կողմից թողարկված այնպիսի արժեթղթերով և պարտատոմսերով, որոնք ունեն առնվազն B+ վարկանիշ:

9 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազ. ՀՀ դրամ	**Գրասենյակային սարքավորումներ**	**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ**	**Ոչ նյութական ակտիվներ**	**Ընդամենը**
Սկզբնական արժեք				
1 հունվարի, 2022թ.	**67,176**	**66,576**	**794**	**134,546**
Ավելացումներ	8,484	40,548	-	**49,032**
31 դեկտեմբերի 2022թ.	**75,660**	**107,124**	**794**	**183,578**
Ավելացումներ	10,175	11,339	-	**21,514**
31 դեկտեմբերի 2023թ.	**85,835**	**118,463**	**794**	**205,092**
Կուտակված մաշվածություն և ամորտիզացիա				
1 հունվարի, 2022թ.	**36,169**	**55,480**	**578**	**92,227**
Տարվա ծախս	**7,257**	**22,681**	**80**	**30,018**
31 դեկտեմբերի 2022թ.	**43,426**	**78,161**	**658**	**122,245**
Տարվա ծախս	11,985	32,889	133	**45,007**
31 դեկտեմբերի 2023թ.	**55,411**	**111,050**	**791**	**167,252**
Հաշվեկշռային արժեք				
31 դեկտեմբերի 2022թ.	**32,234**	**28,963**	**136**	**61,333**
31 դեկտեմբերի 2023թ.	**30,424**	**7,413**	**3**	**37,840**

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառում են գրասենյակային տարածքի վարձակալությունը: Ընկերությունը վարձակալում է գրասենյակ «Էրեբունի Պլազայում»՝ Հայաստան, Երևան, Վ. Սարգսյան 26/1 հասցեում: Ընկերությունը 2019թ. գրասենյակային տարածքը ճանաչել է օգտագործման իրավունքով ակտիվ և մաշվածություն է հաշվարկել վարձակալության ժամկետի ընթացքում, որը կազմում է 3 տարի 2022թ. ընթացքում պայմանագիրը երկարաձգվել է ևս 2 տարով: 2023թ. 14 ամսով վարձակալությամբ ստացվել է լրացուցիչ տարածք: Վարձակալության ժամկետի սկզբում ընկերությունը կատարել է կանխավճար: Հարակից պարտավորությունը ներկայացված է «Վարձակալության գծով պարտավորություններ» տողում:

10 Այլ ակտիվներ

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.** ***(վերաներկա -յացված)***
Կապակցված կողմի գծով դեբիտորական պարտք՝ փոխհատուցվող ծախսեր	63,654	57,766
Կապակցված կողմի գծով դեբիտորական պարտք՝ SS խորհրդատվական վճարներ	36,660	4,471
Կանխավճարային ծախսեր	17,982	10,834
Դեբիտորական պարտք ընդհանուր գործառնությունների գծով	5,817	446
Դեբիտորական պարտքեր այլ հարկերի գծով	3,638	6,143
Այլ դեբիտորական պարտքեր	1,080	794
Ընդամենը այլ ակտիվներ	**128,831**	**80,454**

11 Հետաձգված շահութահարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Մնացորդը տարեսկզբին	10,385	(12,442)
Կրեդիտագրված շահույթին կամ վնասին	10,240	22,827
Մնացորդը տարեվերջին	**20,625**	**10,385**

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազ. ՀՀ դրամ	**1 հունվարի 2023թ.**	**Շահույթում կամ վնասում ճանաչվող**	**31 դեկտեմբերի 2023թ.**
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ածանցյալ պարտավորություններ	-	34	34
Հաշվեգրված ծախսեր	8,211	(1,603)	6,608
Վարձակալության գծով պարտավորություններ	3,963	(3,799)	164
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	901	(901)	-
Հարկային վնաս	2,523	12,655	15,178
	15,598	**6,386**	**21,984**
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5,213	(3,879)	1,334
Ածանցյալ ակտիվներ	-	25	25
	5,213	**(3,854)**	**1,359**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	**10,385**	**10,240**	**20,625**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազ. ՀՀ դրամ	**1 հունվարի 2022թ.**	**Ճանաչված շահույթում կամ վնասում**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ածանցյալ պարտավորություններ	72,729	(72,729)	-
Հաշվեգրված ծախսեր	8,700	(489)	8,211
Վարձակալության գծով պարտավորություններ	-	3,963	3,963
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	-	901	901
Հարկային վնաս	-	2,523	2,523
	81,429	**(65,831)**	**15,598**
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	5,213	5,213
Ածանցյալ ակտիվներ	93,871	(93,871)	-
	93,871	**(88,658)**	**5,213**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային (պարտավորություններ)/ ակտիվներ	**(12,442)**	**22,827**	**10,385**

12 Հաճախորդներից ստացված կանխավճարներ

	31 դեկտեմբերի 2023թ.	**31 դեկտեմբերի 2022թ.** ***(վերաներկայացված)***
Հաճախորդներից ստացված կանխավճարներ և միջնորդներին վճարման ենթակա գումարներ	120,618	82,058
Ընդամենը	**120,618**	**82,058**

Հաճախորդներից ստացված կանխավճարները ներկայացնում են հաճախորդների այն դեպոզիտները, որոնք ճշգրտվում են դրանց առևտրային շահույթի և վնասի, ինչպես նաև միջնորդավճարների չափով:

Հաճախորդներից ստացված կանխավճարները և միջնորդներին վճարման ենթակա գումարների արժույթները ներկայացված են ծանոթագրություն 22-ում:

13 Հաշվեգրված պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.** *(վերաներկայացված)*
Հաշվեգրված պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ	26,239	41,130
Հաշվեգրված հարկեր և տուրքեր	21,887	15,939
Հաշվեգրված աուդիտի և այլ վճարներ	14,332	3,657
ՏՏ ծառայության և հարթակի սպասարկման վճար	58,887	2,627
Այլ	8,567	14,023
Ընդամենը	**129,912**	**77,376**

14 Սեփական կապիտալ և պահուստներ

Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	**Սովորական բաժնետոմսեր 2023թ.**	**Սովորական բաժնետոմսեր 2022թ.**
Սովորական բաժնետոմսերի քանակը՝ յուրաքանչյուրը 414.96 ՀՀ դրամ	840,280	840,280

Ընկերությունն ունի մեկ դասի սովորական բաժնետոմսեր, որոնք չունեն հաստատուն եկամտի իրավունք:

Պահուստային կապիտալ. Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ: Այդ հատկացումները կարգավորվում են Ընկերության կանոնադրությամբ, համաձայն որի Ընկերությունն իր կուտակված շահույթից պարտավոր է ստեղծել պահուստ՝ բաժնետիրական կապիտալի առավելագույնը 15%-ի չափով:

15 Հասույթ բրոքերային և այլ ծառայություններից

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ		
ՏՏ ծառայություններից հասույթ	416,255	157,548
Բրոքերային ծառայություններից միջնորդավճարներ	18,425	22,764
Խորհրդատվական ծառայություններից հասույթ	3,831	2,515
Բրոքերային սվոփից հասույթ	1,250	47,483
Ընդամենը	**439,761**	**230,310**

Հաճախորդների հետ պայմանագրերից ստացված հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի կետում:

16 Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Արժեթղթերում ներդրումներից եկամուտ	23,339	13,432
Կապակցված կողմերին փոխառություններից եկամուտ	14,644	10,748
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	13,209	22,467
Ընդամենը	**51,192**	**46,647**

17 Միջնորդավճարների գծով ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Միջնորդներին տրվող վճարներ	3,777	159
Բրոքերային միջնորդավճարի ծախսեր	1,538	4,250
Ընդամենը	**5,315**	**4,409**

18 Այլ ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Հարկեր	41,706	34,911
SS աջակցություն	40,019	25,998
Տեխնիկական սպասարկում	16,905	12,626
Աուդիտ	12,880	3,709
Բիզնեսի ապահովագրություն	12,760	15,514
Խորհրդատվություն	6,180	353
Կոմունալ վճարներ	2,835	2,714
Բանկային փոխանցումների համար վճարներ	1,052	1,520
Այլ	14,923	20,854
Ընդամենը	**149,260**	**118,199**

19 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Հետաձգված հարկ	10,240	22,827
Ընդամենը	**10,240**	**22,827**

Գործող հարկի դրույքաչափի համադրումը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**Գործող դրույքաչափ (%)**	**2022թ. (վերաներկայացված)**	**Գործող դրույքաչափ (%)**
Վնաս մինչև շահութահարկով հարկումը	**(91,590)**		**(200,319)**	
Հարկը հաշվարկված է 18% դրույքաչափով	(16,486)	18%	(36,057)	18%
Չճանաչված հետաձգված հարկ հետագա ժամանակաշրջաններ փոխանցվող վնասի գծով	(2,278)	2.49%	(454)	0.23%
Մշտական տարբերություններ փոխարժեքային (օգուտի)/ վնասի գծով	(614)	0.67%	21,249	(10.61%)
Այլ մշտական տարբերություններ չհարկվող եկամտի գծով	(838)	0.92%	(10,766)	5.37%
Այլ մշտական տարբերություններ չնվազեցվող ծախսերի գծով	9,976	(10.89%)	3,201	(1.6%)
Շահութահարկի գծով փոխհատուցում	**(10,240)**	**11.19%**	**(22,827)**	**11.39%**

20 Հաշվապահական հաշվառման վերաբերյալ գնահատումներ և դատողություններ

Գնահատումները և դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են նախորդ փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում:

Հաշվապահական գնահատումներ Ընկերությունը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Արդյունքում առաջացած հաշվապահական հաշվառման գնահատումները կարող են տարբերվել համապատասխան փաստացի արդյունքներից: Ստորև դիտարկվում են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք ունեն հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումներ առաջացնելու էական ռիսկ:

Հետաձգված շահութահարկի ակտիվի ճանաչում. Հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ապագայում ակնկալվում է վերականգնել, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնց դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները: Ապագա հարկվող շահույթի և ապագայում հավանական հաշվանցման ենթակա հարկային նվազեցումների

չափը որոշվում է ղեկավարության կողմից մշակված միջնաժամկետ գործարար ծրագրի և ապագայի նկատմամբ դրա արտարկման/էքստրապոլյացիայի/ արդյունքների հիման վրա:

Գործարար ծրագրի հիմնական ենթադրությունները Ընկերության ակնկալվող եկամուտներն ու ծախսերն են առաջիկա երեք տարիներին: Ընկերությունն ունի գործող պայմանագրեր՝ շարունակելու կայուն եկամուտների հոսքերի սպասարկումը 2024 թվականին և հետագայում, և ղեկավարությունը նաև բանակցել է 2024 թվականին եկամտի նոր հոսքի վերաբերյալ պայմանագրի նախագիծը: Ընկերությունն ակնկալում է, որ հաջորդ ժամանակաշրջաններում կունենա բավարար հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները կարող են օգտագործվել: Բացի այդ, փոխանցվող հետաձգված հարկային ակտիվների զգալի մասը բաղկացած է 2022 և 2023 ֆինանսական տարիների համար առաջացած հարկային վնասներից, և Ընկերությունն ունի օրինական իրավունք դրանք փոխհատուցելու ապագա հարկվող շահույթներից մինչ 2027 և 2028 ֆինանսական տարիները, համապատասխանաբար, ինչպես նախատեսված է Հայաստանի հարկային օրենսդրությամբ: Ընկերությունը գնահատում է, որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 15,178 հազար դրամի չափով հարկային վնասների մնացորդը կսկսի օգտագործել հարկային շահույթների դիմաց՝ սկսած 2024 ֆինանսական տարվանից և ակնկալում է դրանք ամբողջությամբ օգտագործել առավելագույնը առաջիկա երեք տարիներին: Ընկերությունը չի ակնկալում, որ շրջակա միջավայրի մակրոտնտեսական փոփոխությունները կհանգեցնեն անբարենպաստ ազդեցությունների հետաձգված շահութահարկի փոխհատուցման մնացորդների ղեկավարության գնահատումների վրա, սակայն ղեկավարությունը կվերանայի նման գնահատումների ողջամտությունը յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության պարտավորությունների արժեքը հիմնված է վարձակալության պայմանների վերաբերյալ ղեկավարության գնահատումների, ինչպես նաև վարձակալության վճարների զեղչման համար օգտագործվող փոխառության լրացուցիչ տոկոսադրույքի վրա: Վարձակալության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր համապատասխան գործոններն ու հանգամանքները, որոնք տնտեսական դրդապատճառ են ստեղծում երկարաձգելու կամ դադարեցման տարբերակը չկիրառելու համար: Երկարաձգման տարբերակները և/կամ դադարեցման տարբերակներից հետո ժամկետները ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, երբ վարձակալությունը ողջամտորեն վստահ է երկարաձգվելու կամ չդադարելու համար: Վարձակալված գրասենյակների համար գործոնները, որոնք սովորաբար ամենաարդիականն են, հետևյալն են՝ (ա) եթե կան նշանակալի տույժեր, եթե Ընկերությունը նախապես լուծի պայմանագիրը, և (բ) եթե վարձակալության գույքի ցանկացած բարելավում ակնկալվում է, որ կունենա զգալի մնացորդային արժեք: Ընկերությունը ողջամտորեն վստահ է երկարաձգելու և չլուծելու վարձակալության պայմանագիրը: Հակառակ դեպքում, Ընկերությունը հաշվի է առնում այլ գործոններ, ներառյալ վարձակալության պատմական տևողությունը և ծախսերը և բիզնեսի խափանումները, որոնք անհրաժեշտ են վարձակալված ակտիվը փոխարինելու համար: Վարձակալության ժամկետը վերագնահատվում է, եթե օպցիոնն օգտագործվում է կամ չի օգտագործվում, կամ Ընկերությունը պարտավորվում է օգտագործել կամ չկիրառել այն: Այս գործոնների փոփոխությունները կարող են ազդել վարձակալության գնահատված ժամկետի և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների ներկայացված արժեքի վրա:

21 Ֆինանսական գործիքներ

Հաշվառման հաշվառման քաղաքականության էական դրույթներ. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և կիրառվող մեթոդաբանության նշանակալի դրույթները, ներառյալ ճանաչման չափանիշները և եկամուտների և ծախսերի ճանաչման հիմքերը՝ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների յուրաքանչյուր դասի գծով բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաներ. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ամորտիզացված արժեքով		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	290,471	64,818
Կարճաժամկետ բանկային ավանդներ	136,805	226,533
Միջնորդներից ստացման ենթակա գումարներ	56,390	55,683

Ներդրումներ ամորտիզացված արժեքով	245,319	435,021
Այլ ֆինանսական ակտիվներ	107,211	63,477
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով		
Ածանցյալ ակտիվներ	141	113
Ընդամենը	**836,337**	**845,645**

Ֆինանսական պարտավորություններ

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ամորտիզացված արժեքով		
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	120,618	82,058
Վարձակալության գծով պարտավորություններ	914	22,169
Այլ ֆինանսական պարտավորություններ	81,786	20,307
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով		
Ածանցյալ պարտավորություններ	187	200
Ընդամենը	**203,505**	**124,734**

22 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունը ենթարկվում է ֆինանսական գործիքների հետ կապված տարբեր ռիսկերի: Ռիսկերի հիմնական տեսակներն են շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Շուկայական ռիսկ. Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է նրա գործառնական գործունեությունից:

Արտարժութային ռիսկ. Ընկերության գործառնական արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ Հայաստանի Հանրապետության դրամը (ՀՀ դրամ):

Ընկերությունը գործարքներ է իրականացնում հիմնականում արժութային ռիսկ կրող գործիքներով: Ընկերությունն ունի նաև արտարժույթով արտահայտված ակտիվներ: Արժույթի դիրքերը ներառում են արտարժույթով արտահայտված սեփական դրամական միջոցները, որոնք պահվում են արտաքին շուկաներում գործարքներ կնքելու նպատակով:

Ընկերությունն օգտագործում է ՀՀ դրամ՝ արտարժութային փոխարժեքային ռիսկի վերլուծության համար: Ընկերությունը նվազեցնում է արտարժութային ռիսկը՝ շարունակաբար վերահսկելով արտարժույթի ազդեցությունը :

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են առանցքային ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են ՀՀ դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

31 դեկտեմբերի 2023թ. *Հազ. ՀՀ դրամ*	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**Անգլիական ֆունտ**
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	210,499	23,968	1,318
Միջնորդների մոտ պահվող գումարներ	24,119	32,271	-
Ածանցյալ ակտիվներ	141	-	-
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	61,154	-	-
Այլ ակտիվներ	100,314	-	-
	396,227	**56,239**	**1,318**
Ֆինանսական պարտավորություններ			

Հաճախորդներից ստացված կանխավճարներ	73,343	48,594	(1,319)
Այլ պարտավորություններ	60,154	-	-
Ածանցյալ պարտավորություններ	187	-	-
	133,684	**48,594**	**(1,319)**
Զուտ դիրք	**262,543**	**7,645**	**2,637**

31 դեկտեմբերի 2022թ. *Հազ. ՀՀ դրամ*	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**	**Անգլիական ֆունտ**
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,261	2,021	11,031
Կարճաժամկետ բանկային ավանդներ	88,662	-	-
Միջնորդների մոտ պահվող գումարներ	49,520	6,117	46
Ածանցյալ ակտիվներ	113	-	-
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	257,000	-	-
Այլ ակտիվներ	62,237	-	-
	507,793	**8,138**	**11,077**
Ֆինանսական պարտավորություններ			
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	80,796	1,062	-
Այլ պարտավորություններ	2,627	-	-
Ածանցյալ պարտավորություններ	200	-	-
	83,623	**1,062**	**-**
Զուտ դիրք	**424,170**	**7,076**	**11,077**

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Ընկերության զգայունությունը համապատասխան արժույթի նկատմամբ ՀՀ դրամի 10% (2022թ.՝ 10%) արժևորման և արժեզրկման դեպքում: 10%-ը (2022թ.՝ 10%) ներկայացնում է ղեկավարության գնահատականը արտարժույթի փոխարժեքի հնարավոր փոփոխության վերաբերյալ: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամական հոդվածները՝ ժամանակաշրջանի վերջում ճշգրտելով դրանց փոխարկումը արտարժույթի փոխարժեքի 10% (2022թ. 10%) փոփոխությամբ:

Եթե ՀՀ դրամը համապատասխան արժույթի նկատմամբ արժևորվեր 10%-ով (2022թ.՝ 10%), ապա դա կունենար հետևյալ ազդեցությունը ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զուտ արդյունքի վրա:

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
ԱՄՆ դոլար	26,254	42,417
Եվրո	765	708
Անգլիական ֆունտ	264	1,108

Վերոնշյալ բացասական մեծությունը ցույց է տալիս շահույթի կամ սեփական կապիտալի նվազում, այն դեպքում, երբ ՀՀ դրամը համապատասխան արժույթի նկատմամբ արժևորվում է 10%-ով: Համապատասխան արժույթների նկատմամբ ՀՀ դրամի 10% անկման դեպքում համադրելի ազդեցություն կունենա շահույթի կամ սեփական կապիտալի վրա, իսկ վերը նշված մնացորդները կլինեն դրական մեծություններ:

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի ֆինանսական ակտիվների գծով:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով.

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ. (վերաներկայացված)**
Ամորտիզացված արժեքով		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	290,471	64,818
Կարճաժամկետ բանկային ավանդներ	136,805	226,533
Միջնորդների մոտ պահվող գումարներ	56,390	55,683
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	245,319	435,021
Այլ ֆինանսական ակտիվներ	107,211	63,477
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով		
Ածանցյալ ակտիվներ	141	113
	836,337	**845,645**

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

2022թ. փոխառությունների վարկային ռիսկը ընդունելի է, քանի որ այն տրամադրվել է Ընկերության կապակցված կողմին: Վարկի գծով ճանաչված կորստի գծով պահուստը հիմնված է 12-ամսյա ակնկալվող կորստի վրա: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունը չունի փոխառության գծով դեբիտորական պարտքի մնացորդ, քանի որ այն ամբողջությամբ մարվել է 2023 թվականին:

Ամորիտզացված արժեքով չափվող պարտատոմսերի մեջ Ընկերության ներդրումները ցածր պարտքային ռիսկ են պարունակում, քանի որ դրանք պահվում են բարձր վարկանիշ ունեցող գործընկերների մոտ և ֆինանսական հաստատություններում:

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը ի վիճակի չի լինի կատարել իր պարտավորությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև հստակ առևտրային սահմանաչափեր սահմանելով իր հաճախորդների համար և ապահովելով հաճախորդի դիրքը փակելու իր ամրագրված իրավունքը՝ հաշիվը բացվելու ժամանակ հաճախորդի հետ համաձայնեցված ընդհանուր դրույթների և պայմանների միջոցով:

Իրացվելիության ռիսկը հիմնականում առաջանում է հաճախորդների կողմից արված դեպոզիտներից: Հաճախորդների ավանդների զգալի մասը փոխանցվում է միջնորդ բրոքերի, իսկ մնացյալը պահվում է առանձին, չօգտագործվող բանկային հաշվի վրա: Համաձայն հաճախորդների հետ պայմանագրի պայմանների՝ միջնորդ բրոքերի անվճարունակության դեպքում, Ընկերության միջոցները կարող են չբավարարել հաճախորդի պահանջները, և Ընկերությունը պարտավոր չի լինի ծածկել հաճախորդի կորուստները: Հետևաբար իրացվելիության ռիսկն աննշան է:

Հաշվեգրված ծախսերն ու վարձակալության գծով պարտավորությունները պայմանագրով ենթակա են մարման մեկ ամսվա ընթացքում:

Ֆինանսական գործիքների ժամկետայնության վերլուծությունը 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ **2023թ.**

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	290,471	-	-	-	**290,471**
Կարճաժամկետ բանկային ավանդներ	-	-	136,805	-	**136,805**
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	-	72,660	152,358	20,301	**245,319**
Միջնորդների մոտ պահվող գումարներ	56,390	-	-	-	**56,390**
Այլ ֆինանսական ակտիվներ	36,660	-	70,551	-	**107,211**
Ընդամենը	**383,521**	**72,660**	**359,714**	**20,301**	**836,196**
Պարտավորություններ					
Վարձակալության գծով պարտավորություններ	914	-	-	-	**914**
Պայմանագրային պարտավորություններ	120,618	-	-	-	**120,618**
Այլ պարտավորություններ	22,899	-	58,887	-	**81,786**
Ընդամենը հնարավոր ապագա վճարումներ ֆինանսական պարտավորությունների գծով	**144,431**	**-**	**58,887**	**-**	**203,318**
Ֆինանսական գործիքներից առաջացող իրացվելիության բացը	**239,090**	**72,660**	**300,827**	**20,301**	**632,878**

Հազ. ՀՀ դրամ **2022թ.**

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	**1-ից 3 ամիս**	**3-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ընդամենը**
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	64,818	-	-	-	**64,818**
Կարճաժամկետ բանկային ավանդներ	-	226,533	-	-	**226,533**
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	-	61,475	240,757	132,789	**435,021**
Միջնորդների մոտ պահվող գումարներ	55,683	-	-	-	**55,683**
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	63,477	-	**63,477**
Ընդամենը	**120,501**	**288,008**	**304,234**	**132,789**	**845,532**
Պարտավորություններ					
Վարձակալության գծով պարտավորություններ	22,169	-	-	-	**22,169**
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	82,058	-	-	-	**82,058**
Այլ պարտավորություններ	-	-	20,307	-	**20,307**
Ընդամենը հնարավոր ապագա վճարումներ ֆինանսական պարտավորությունների գծով	**104,227**	**-**	**20,307**	**-**	**124,534**
Ֆինանսական գործիքներից առաջացող իրացվելիության բացը	16,274	288,008	283,927	132,789	**720,998**

23 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս մակարդակները նկարագրված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված).
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող).
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման մեթոդների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում. Ընկերության ղեկավարությունն իրականացնում է ֆինանսական գործիքների գնահատում ֆինանսական հաշվետվությունների նպատակներով: Գնահատման տեխնիկաները ընտրվում են՝ հիմնվելով յուրաքանչյուր գործիքի բնութագրից, շուկայական տվյալների հիման վրա տեղեկության առավելագույնս արդյունավետ օգտագործման նպատակով: Ֆինանսական գործիքների գնահատման համար օգտագործվող կոնկրետ գնահատման մեթոդները ներառում են.

- բաց դիրքերի համար՝ հղում կատարելով ակտիվ շուկայի գործարքներին
- այլ ֆինանսական գործիքների համար՝ զեղչված դրամական հոսքերի վերլուծություն

Ընկերությունը դասակարգել է ածանցյալ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է: Միջնորդների մոտ պահվող գումարների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի ողջամիտ մոտարկում:

Կապակցված կողմին վարկը տրամադրվել է «Ի Ջի Էմ Մարքեթինգ Մենեջմենթ» ՍՊԸ-ին: Այն ունի մեկ տարի մարման ժամկետ և 5% (2022թ.՝ 5%) Վարկի գնահատված իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: 198,820 հազար դրամ գումարը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը 5%-ով: Առավել նշանակալի ելակետային տվյալը զեղչման դրույքն է:

Բանկային ավանդների և պարտատոմսերում ներդրումների հաշվեկշռային արժեքները համարվում են դրանց իրական արժեքների ողջամիտ մոտարկում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է ներկա արժեքի տեխնիկայի միջոցով: Իրական արժեքները գնահատվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերը շուկայական փոխարժեքով զեղչելով: Առավել նշանակալի ելակետային տվյալը զեղչման դրույքն է:

24 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը տնօրինում է իր կապիտալը՝ գործունեության անընդհատության պահպանման և շահագրգիռ կողմերի համար բավարար շահութաբերության ապահովման մոտեցմամբ:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից բաշխված բաժնետերերի միջև, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները՝ արդյունավետ ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքը պահպանելու համար: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ տնտեսական պայմանների և հիմքում ընկած ակտիվների ռիսկային բնութագրերի համապատասխան: Կապիտալ կառուցվածքը պահպանելու և կարգավորելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու նպատակով:

Ընկերության ֆիանանսական լծակը հավասար է զրոյի, քանի որ Ընկերության կապիտալը կազմված է միայն սեփական կապիտալից (2022թ.՝ զրո): Ընկերության կապիտալը 2023թ. դեկտեմբերի 31-ին կազմել է 682,971 ՀՀ դրամ իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 764,321 դրամ:

Կապիտալի համարժեքություն. Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ ապահովել Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և Ընկերության կայուն վարկային վարկանիշի և ուժեղ կապիտալի ցուցանիշների պահպանումը՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով: Ընկերությունը 2023 և 2022 թվականների ընթացքում կատարել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալի պահանջները: ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

ՀՀ ԿԲ-ը ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալի համար սահմանել է հետևյալ տնտեսական նորմատիվը.

Հազ. ՀՀ դրամ	**Փաստացի կապիտալ 31 դեկտեմբերի 2023թ.**	**Փաստացի կապիտալ 31 դեկտեմբերի 2022թ.**	**ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվը**
Ընդհանուր կապիտալի նվազագույն չափը	682,971	764,321	300,000
Բաժնետիրական կապիտալի նվազագույն չափը	348,683	348,683	1,000

25 Պայմանական դեպքեր

Հարկեր. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը ենթակա են վերանայման և հետաքննության հարկային մարմինների կողմից, որոնք տուգանքներ և տույժեր կիրառելու իրավասություն ունեն:

Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

26 Կապակցված կողմեր

Ընկերության փոխկապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, համատեղ վերահսկվող ընկերությունները, հիմնական ղեկավարությունը և այլք, ինչպես նկարագրված է ստորև:

Վերահսկողություն. Ընկերությունը վերահսկվում է «Էքութի Գրուփ ԼԹԴ» ընկերության կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը: «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ն գործունեություն է ծավալում Ջերսիի Սենթ Հելիեր քաղաքում և չի պատրաստում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ: «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ի բաժնետոմսերի մեծամասնությունը վերահսկվում է Աբդուլ Ռաուֆ Ալ Բիթարի կողմից, ով հանդիսանում է վերջնական վերահսկող կողմ:

Գործարքներ կապված կողմերի հետ: Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ ունեցել է հետևյալ գործարքները և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**2023թ.**	**2022թ.**
Գործարքներ.		
Առանցքային ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և այլ վճարումներ		
Աշխատավարձ	74,933	59,677
Պարտադիր կենսաթոշակային համակարգի հատկացումներ	3,131	2,701
Պարգևավճար	-	12,918
Ապահովագրություն	2,251	1,737
Համատեղ վերահսկվող ընկերություններ		
Բրոքերային միջնորդավճարի ծախսեր	1,538	4,249
Ծառայությունների մատուցում	420,086	160,063
Միջնորդներին փոխանցված դրամական միջոցներ	49,505	1,109,776
Ծառայությունների ձեռքբերում	71,650	58,408

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Չմարված մնացորդներ.		
Համատեղ վերահսկվող ընկերություններ		
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	-	198,820
Միջնորդների մոտ պահվող գումարներ	56,390	55,796
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	108,014	64,747
Հաշվեգրված պարտավորություններ	60,154	56,566
Ստացված կանխավճար	-	1,181
Արձակուրդային պահուստ	9,284	10,333

27 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2023թ. ընթացքում Ընկերությունը որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», պայմանավորված նախորդ տարվա սխալի բացահայտմամբ: Վերոնշյալի արդյունքում Ընկերության ղեկավարությունը որոշել է համապատասխան ճշգրտումներ կատարել սույն ֆինանսական հաշվետվություններում, որոնք կիրառվել են հետընթաց՝ ըստ Ընկերության կողմից կիրառվող քաղաքականության:

«Այլ ակտիվների» ճշգրտումը կապված է որոշակի ծախսերի հետ, որոնք սխալ ճանաչվել են որպես անձնակազմի ծախսեր 2022 թվականին: Այս ծախսերը վերաբերում են ոչ նյութական ակտիվի (ՏՏ նախագծեր) զարգացման համար կատարված ներդրմանը, որոնք արտացոլված են «Ի Ջի Էմ Լաբս»-ի (կապակցված կողմ) հաշվեկշռում: Սխալը շտկելու նպատակով գրանցվել է կապակցված կողմից դեբիտորական պարտք և ապաճանաչվել է անձնակազմի ծախսերը: Ֆինանսական վիճակի և շահույթի և վնասի և այլ համապարփակ եկամուտների վրա ազդող ուղղիչ գրառում է կատարվել, որը հանգեցրել է 2022 թվականի ավարտված տարվա համար ներկայացված անձնակազմի ծախսերի նվազմանը 57,746 հազար ՀՀ դրամով և 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ ակտիվների աճին 57,746 հազար ՀՀ դրամով:

«Հաճախորդներից ստացված կանխավճարների» ճշգրտումը կապված է 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդում հայտնաբերված սխալի հետ: Ֆինանսական վիճակի և շահույթի և վնասի և այլ համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունների վրա ազդող ուղղիչ գրառում է կատարվել՝ նվազեցնելով Հաճախորդներից ստացված կանխավճարների վերագնահատման ազդեցությունը: Սխալը ուղղելու նպատակով Ընկերությունը պակասեցրել է հաճախորդներից ստացված կանխավճարների մնացորդը 2,219 հազար ՀՀ դրամով, իսկ արտարժույթի փոխարկումից զուտ վնասը նվազեցրել է 2,219 հազար դրամով:

«Այլ ակտիվների» և «Հաշվեգրված պարտավորությունների» ճշգրտումը կապված է 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հայտնաբերված սխալի հետ: Հարկային դեբիտորական պարտքերը սխալ կերպով ներառվել են որպես հաշվեգրված պարտավորություններից նվազեցումներ և ներկայացվել զուտ հաշվեգրված պարտավորությունների մնացորդում: Հաշվեգրված պարտավորությունների մնացորդը 18,373 հազար ՀՀ դրամով ավելացնելու և այլ ակտիվների և շահութահարկի դեբիտորական պարտքերի մնացորդները համապատասխանաբար 6,589 և 11,784 հազար ՀՀ դրամով ավելացնելու նպատակով, կատարվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա ազդող ուղղիչ գրառում:

«Վարձակալության պարտավորությունների» ճշգրտումը կապված է 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդի վրա հայտնաբերված սխալի հետ: Ֆինանսական վիճակի և շահույթի և վնասի և այլ համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունների վրա ազդող ուղղիչ գրառում է կատարվել՝ ավելացնելով վարձակալության պարտավորությունների մնացորդը 153 հազար դրամի չափով և համապատասխանաբար ավելացնելով ֆինանսական ծախսերը 153 հազար դրամի չափով:

Այս ճշգրտումները ազդեցություն չեն ունեցել 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ սկզբնական մնացորդների վրա, և, հետևաբար, երրորդ հաշվեկշիռը ներկայացված չէ:

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**		
	սկզբնապես ներկայացված	**Վերաներկա-յացում**	**վերաներկայացված մնացորդ**
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	64,818	-	64,818
Կարճաժամկետ բանկային ավանդներ	226,533	-	226,533
Միջնորդների մոտ պահվող գումարներ	55,683	-	55,683
Ածանցյալ ակտիվներ	113	-	113

Ներդրումներ ամորտիզացված արժեքով	435,021	-	435,021
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	61,333	-	61,333
Այլ ակտիվներ	16,119	64,335	80,454
Շահութահարկի կանխավճար	-	11,784	11,784
Հետաձգված շահութահարկի գծով պարտավորություններ	10,385	-	10,385
Ընդամենը ակտիվներ	**870,005**	**76,119**	**946,124**
		-	
Պարտավորություններ		-	
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	84,277	(2,219)	82,058
Ածանցյալ պարտավորություններ	200	-	200
Վարձակալության գծով պարտավորություններ	22,016	153	22,169
Հաշվեգրված պարտավորություններ	59,003	18,373	77,376
Ընդամենը պարտավորություններ	**165,496**	**16,307**	**181,803**
		-	
Սեփական կապիտալ		-	
Բաժնետիրական կապիտալ	348,683	-	348,683
Պահուստային կապիտալ	40,418	-	40,418
Չբաշխված շահույթ	315,408	59,812	375,220
Ընդամենը սեփական կապիտալ	**704,509**	**59,812**	**764,321**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**870,005**	**76,119**	**946,124**

«Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» ճշգրտումն առաջացել է գործառնական և ներդրումային գործունեության միջև դրամական միջոցների հոսքերի վերադասակարգման արդյունքում:

Հազ. ՀՀ դրամ	**2022թ. (սկզբնապես ներկայացված)**	**Վերաներկայացում**	**2022թ. (վերաներկայացված)**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված միջոցներ	1,426,409	(1,426,409)	-
Հաճախորդներից ստացված միջոցներ	-	1,912,811	1,912,811
Հաճախորդներին փոխանցված միջոցներ	-	(486,402)	(486,402)
Խորհրդատվական ծառայություններից ստացված միջոցներ	161,311	-	161,311
Միջնորդներին փոխանցված դրամական միջոցներ	(1,651,996)	(13,206)	(1,665,202)
Միջնորդներից ստացված դրամական միջոցներ	-	13,206	13,206
Աշխատավարձ և այլ համարժեք վճարումներ աշխատակիցներին	(257,308)	-	(257,308)
Բանկային ավանդների զուտ փոփոխություն	-	137,059	137,059
Հարթակի վարման վճարներ	(36,982)	-	(36,982)
Ապահովագրություն	-	(14,231)	(14,231)
Վճարված հարկեր և տուրքեր	(21,139)	-	(21,139)
Այլ ծախսեր	(53,989)	6,251	(47,738)
	(433,694)	**129,079**	**(304,615)**
Վճարված շահութահարկ	(10,231)	-	(10,231)
Գործառնական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(443,925)**	**129,079**	**(314,846)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Արժեթղթերում ներդրումներից ստացված միջոցներ	10,664	9,336	20,000
Ներդրումների ձեռքբերում	(120,435)	(20,000)	(140,435)
Ստացված տոկոսային եկամուտ	23,507	25,034	48,541
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(8,484)	-	(8,484)
Բանկային ավանդների զուտ փոփոխություն	141,421	(141,421)	-
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	**46,673**	**(127,051)**	**(80,378)**
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ			
Վարձակալության գծով վճարված պարտավորություններ	(22,302)	(2,028)	(24,330)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**(22,302)**	**(2,028)**	**(24,330)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	**(419,554)**	**-**	**(419,554)**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(76,960)	-	(76,960)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**561,332**	**-**	**561,332**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**64,818**		**64,818**

Տարվա ընթացքում Ընկերությունը կատարել իր գործունեության վերլուծություն և որոշել փոխել շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների ներկայացումը՝ համապատասխանեցնելով Խմբի ներկայացման և ՀՀՄՍ 1-ի պահանջներին: Վերադասակարգումները չեն հանգեցրել 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հաշվետվության մեջ արտացոլված վնասի և սեփական կապիտալի փոփոխության:

Հազ. ՀՀ դրամ	**2022թ. (սկզբնապես ներկայացված)**	**Վերաներկա-յացում**	**2022թ. (վերաներկա-յացված)**
Հասույթ բրոքերային և այլ ծառայություններից	230,310	-	230,310
Միջնորդավճարների գծով ծախսեր	-	(4,409)	(4,409)
Տոկոսային եկամուտ	46,647	(46,647)	-
Զուտ հասույթ	**276,957**	**(51,056)**	**225,901**
Միջնորդավճարների գծով ծախսեր	(4,409)	4,409	-
Հատուցումներ աշխատակիցներին	(265,167)	57,746	(207,421)
Մաշվածություն և ամորտիզացիա	(30,018)	-	(30,018)
Ֆինանսական ծախսեր	(1,244)	1,244	-
Այլ ծախսեր	(118,199)	-	(118,199)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)	(118,051)	118,051	-
Տարվա գործառնական վնաս	**(260,131)**	**130,394**	**(129,737)**
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	-	46,647	46,647
Ֆինանսական ծախսեր	-	(1,397)	(1,397)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս	-	(115,832)	(115,832)
Վնաս մինչև շահութահարկով հարկումը	**(260,131)**	**59,812**	**(200,319)**
Շահութահարկի գծով փոխհատուցում	22,827	-	22,827
Տարվա վնաս	**(237,304)**	**59,812**	**(177,492)**
Ընդամենը տարվա համապարփակ վնաս	**(237,304)**	**59,812**	**(177,492)**